ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 7.

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի գիտխորհրդի նիստի
10 փետրվարի 2016թ.

Նախագահ՝ Մ. Ա. Զաքարյան

Քարտուղար՝ Կ .Հ. Հովսեփյան

Նիստին մասնակցում էին խորհրդի 10 անդամներ:

ՕՐԱԿԱՐԳ

1. *Ֆակուլտետի զարգացման ռազմավարական ծրագրի քննարկում:*
/զեկ. Մ. Ա. Զաքարյան/
2. *2015-2016 թթ. ուստարվա II կիսամյակի գիտխորհրդի աշխատանքային պլանի հաստատում:*
/զեկ. Մ. Ա. Զաքարյան/
3. *Ֆինանսական միջոցների ներհոսքի ծավալի ընդլայնում:*
/զեկ. Մ. Ա. Զաքարյան/
4. *Անվանական կրթաթոշակի ներկայացում:*
/զեկ. Մ. Ա. Զաքարյան/

ԼՍԵՑԻՆ- Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցներն անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Մ. Ա. Զաքարյանը:

Օրակարգի առաջին հարցը ներկայացրեց խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Զեկուցողը ներկայացրեց ֆակուլտետի զարգացման ռազմավարական ծրագրի հիմնարար արժեքները, նպատակները: Իրականացնել կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխումներ՝ որակավորումների ազգային շրջանակին և աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ: Ընդլայնել ֆակուլտետի դասախոսական կազմի և ուսանողների ներգրավումը հետազոտական աշխատանքներում, նպաստել հետազոտական աշխատանքների միջազգայնացմանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա. Վ. Ցուցուլյանը, Ք. Վ. Օթարյանը և ուրիշներ:

ՈՐՈՇԵՑԻՆ- 1. Ներկայացնել Բնագիտական ֆակուլտետի ռազմավարական ծրագիրը ԵՊՀ ԻՄ Գիտխորհրդի հաստատմանը:

Օրակարգի երկրորդ հարցը ներկայացրեց գիտխորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Նա ներկայացրեց 2015-2016 թթ. ուստարվա II կիսամյակի գիտխորհրդի աշխատանքային պլանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- 1. Հաստատել 2015-2016 թթ. ուստարվա II կիսամյակի գիտխորհրդի աշխատանքային պլանը:

Օրակարգի երրորդ հարցը ներկայացրեց գիտխորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Նա նշեց ֆինանսական միջոցների ներհոսքի ընդլայնման կարևորությունը: Ապահովել շրջանավարտների և այլ շահառուների հետ ֆակուլտետի շարունակական կապը՝ խրախուսելով նրանց կողմից ֆինանսական, նյութական և այլ բնույթի աջակցության նախաձեռնությունները: Բացի այդ, ընդլայնել և կանոնակարգել ֆակուլտետի վճարովի ծառայությունները:

Օրակարգի չորրորդ հարցը ներկայացրեց գիտխորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Նա նշեց, որ ԻԿՄ III կուսի ուսանողուհի Ալվինա Գևորգյանը անցած երկու կիսամյակների ընթացքում ցուցաբերել է գերազանց առաջադիմություն և հասարակակն ակտիվություն ներֆակուլտետային գործընթացներում: Հաշվի առնելով, որ ֆակուլտետում անվանական կրթաթոշակի այլ թեկնածուներ չկան նա առաջարկեց ներկայացնել գիտխորհրդի հաստատմանը Ալվինա Գևորգյանի թեկնածությունը «Մոնթե Մելքոնյանի անվան» կրթաթոշակի:

ՈՐՈՇԵՑԻՆ- 1. Ներկայացնել գիտխորհրդի հաստատմանը Ալվինա Գևորգյանի թեկնածությունը «Մոնթե Մելքոնյանի անվան» կրթաթոշակի:

ՆԱԽԱԳԱՀ	**Մ.Ա. ԶԱՔԱՐՅԱՆ**
ՔԱՐՏՈՒՂԱՐ	**Կ. Հ. ՀՈՎՍԵՓՅԱՆ**